Եվրոպական լեզուների և հաղորդակցության ֆակուլտետի գիտական խորհրդի՝

25.05.2026թ. նիստի թիվ 11 արձանագրություն

Օրակարգ.

1. 2025-2026 ուս. ֆակուլտետի մեթոդխորհրդի կատարած աշխատանքների հաշվետվություն:
2. Ուսանողների արտադրական և մանկավարժական պրակտիկայի արդյունքների ամփոփում:
3. ԵԼՀ ֆակուլտետի դեկանի թափուր պաշտոնում թեկնածության առաջադրում:
4. Ընթացիկ հարցեր:

ԵԼՀ ֆակուլտետի գիտական խորհրդի թիվ 11 -րդ նիստին 35 անդամներից ներկա էին 28-ը: Ֆակուլտետի դեկանի պ/կ Մարինե Յաղուբյանը ողջունեց գործընկերներին և անդրադարձավ օրակարգի առաջին հարցին՝ 2025-2026 ուս. ֆակուլտետի մեթոդխորհրդի կատարած աշխատանքների հաշվետվությանը և խոսքը փոխանցեց մեթոդխորհրդի նախագահ Ն.Հարությունյանին:

ԼՍԵՑԻՆ՝ 2025-2026 ուս. ֆակուլտետի մեթոդխորհրդի կատարած աշխատանքների հաշվետվությունը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ Մեթոդխորհրդի նախագահ Ն.Հարությունյանը նշեց, որ 2025–2026 ուսումնական տարվա ընթացքում մեթոդաբանական խորհրդի կողմից կազմակերպվել և անցկացվել է 7 նիստ: Հաշվետու ժամանակահատվածում դասախոսական կազմը իրականացրել է հետևյալ աշխատանքները.

✓ Այս ուսումնական տարվա առաջին կիսամյակում ինչպես և նախորդ տարում ամբիոնի վարիչները անցկացրել են դասալսումներ: Նոյեմբեր ամսվա մեթոդական խորհրդի նիստի շրջանակում հանդիպում է կազմակերպվել ամբիոնների վարիչների հետ, որի ընթացքում ներկայացվել են դասալսումների ընդհանուր արդյունքները: Նշվել է, որ դասերը տեղի են ունենում ինտերակտիվ, ժամանակակից

մեթոդներով և հիմնականում համապատասխանում են օտար լեզուների դասավանդման արդի պահանջներին:

✓ Դասախոսների մեթոդական կարողությունների մոնիթորինգի արդյունքների քննարկման նպատակով՝ մեթոդական խորհրդի նիստի սահմաններում հանդիպում է կազմակերպվել ամբիոնների վարիչների հետ, որի ընթացքում ներկայացվել են դասալսումների ընդհանուր արդյունքները: Դիտարկվել են մի շարք հարցեր՝ ծրագրային փոփոխություններ կատարելու անհրաժեշտությունը, լսարանում նախնական փորձարկում անցած, նոր ծրագրերի արդյունքները և, հաջորդ ուսումնական տարվանից, դրանց լսարան ներմուծման հարցերը:

✓ Հունվարի 14-ի նիստի ընթացքում քննարկվել է նաև՝ 1-ին կիսամյակի ընթացքում վերապատրաստման դասընթացներ անցած դասախոսների քանակը, իրենց տպավորությունները և արդյունքները: Ֆակուլտետի շուրջ 30 դասախոս ավարտել է ԵՊՀ դասախոսների համար նախատեսված «*AI քեզ բան*» վերապատրաստման խորացված դասընթացը՝ AI տեխնոլոգիաների ու մոտեցումների վերաբերյալ գործնական գիտելիքների ստացման և AI գործիքների՝ կրթական գործընթացում կիրառման վերաբերյալ: Նույն ժամանակաշրջանում 10 դասախոս ավարտել է "*AI in Teaching and Learning*" ՝ ԱՄՆ-ի դեսպանատան կողմից կազմակերպված մեկամսյա դասընթացը:

✓ Բարձացվել է նաև ուսանողների և դասախոսների կարգապահության հարցը: Մասնավորապես, անդրադարձ է կատարվել դասերից ուշացումների և անհարգելի բացակայությունների կրճատման մեխանիզմներին, ինչպես նաև ներքին կարգապահական կանոնների խստիվ պահպանմանը՝ թե՛ դասախոսական կազմի, թե՛ ուսանողության կողմից:

✓ . Մարտ ամսին քննարկվել և հաստատվել են մասնագիտական բլոկների փոփոխությունները: Մասնավորապես՝ «Անգլերեն/ֆրանսերեն և հաղորդակցություն»; «Անգլերեն/գերմաներեն և հաղորդակցություն»; «Անգլերեն/իսպաներեն և

հաղորդակցություն»; «Անգլերեն/իտալերեն և հաղորդակցություն» կրթական ծրագրերի մասնագիտական բլոկների վերանայման և հաստատման հարցը:

✓ «Անգլերեն լեզու և գրականություն» բակալավրիատի կրթական ծրագրում փոփոխություններ կատարելու վերաբերյալ հարցը:

✓ *«Միջմշակութային հաղորդակցություն (անգլերեն)»* կրթական ծրագրի 4-րդ կուրսի «Հանրալեզվաբանություն և մշակույթ» դասընթացում «Արժեքների և գիտելիքի միջոցով կրթության» (VaKE) բաղադրիչի ներդրման հարցը:

✓ Քննարկվել և գրախոսվել է 1 ուսումնամեթոդական ձեռնարկ:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ Ն.Հարությունյանի հաշվետվությունը գնահատել դրական:

Մ.Յաղուբյանը անցավ օրակարգի երկրորդ հարցին՝ ուսանողների արտադրական մանկավարժական պրակտիկայի արդյունքների ամփոփանը: Նշվեց, որ պրակտիկայի արդյունքները ընդհանուր առմամբ գոհացուցիչ են, հավելվեց նաև, որ պետո է այս առումով համագործակցության նոր եզրեր փնտրել և նոր գործընկերներ գտնել: Որոշումն ընդունվեց միաձայն:

ԼՍԵՑԻՆ՝ ԼՍԵՑԻՆ՝ Եվրոպական լեզուների և հաղորդակցության ֆակուլտետի դեկանի պ/կ, բ.գ.թ., դոցենտ *Մարինե Հարությունի Յաղուբյանի*՝ դեկանի պաշտոնում ընտրությունը երաշխավորելու հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ Եվրոպական լեզուների և հաղորդակցության ֆակուլտետի անգլիական բանասիրության ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Ա.Տ. Կնյազյանը, նույն անբիոնի պրոֆեսոր, դոցենտ, բ. գ. թ. Մ.Գ. Դալալյանը, միջմշակութային հաղորդակցության անգլերենի ամբիոնի վարիչ, բ.գ.դ., պրոֆեսոր Շ.Հ. Պարոնյանը, բգ.թ., դոցենտ Ռ.Ռ. Ղազարյանը, անգլերենի թիվ 1 ամբիոնի վարիչ, բ.գ.թ., պրոֆեսոր Մ.Հ. Ապրեսյանը, անգլերենի թիվ

2 ամբիոնի վարիչ, բ.գ.դ., պրոֆեսոր Ե.Լ. Երզնկյանը, թարգմանության տեսության և պրակտիկայի ամբիոնի դոցենտ, բ.գ.թ. Ա.Վ. Խաչատրյանը, ֆրանսիական բանասիրության ամբիոնի վարիչի ժ/պ Հ.Հ.Ջիվանյանը, գերմանական բանասիրության ամբիոնի վարիչ, բ.գ.թ., դոցենտ Գ.Վ. Սավոյանը և ուրիշներ:

Ելույթ ունեցողները, բարձր գնահատելով ***Մարինե Յաղուբյանի՝ որպես եվրոպական լեզուների և հաղորդակցության ֆակուլտետի դեկանի պաշտոնակատարի*** գործունեությունը, նշեցին, որ Մ.Յաղուբյանը 2021 թվականից եղել է ԵԼՀ ֆակուլտետի փոխդեկան և գրանցել հինգ տարվա արդյունավետ գիտա-ուսումնական փորձ: Նրա գործունեության մեջ ներառվել է կրթական ու գիտահետազոտական գործընթացների կազմակերպումը:

Գիտական խորհրդի անդամներն իրենց ելույթներում շեշտադրեցին Մ.Յաղուբյանի *անձնային որակները, մասնագիտական գիտելիքներն ու կառավարման հմտությունները:* Նախ նշվեց, որ Մ.Յաղուբյանը վայելում է թե՛ գործընկերների, պրոֆեսորադասախոսական կազմի, թե՛ ուսանողների սերն ու հարգանքը: Նա ազնիվ, սկզբունքային անձնավորություն է: Նրա նվիրվածությունն աշխատանքին ու պատասխանատվության բարձր զգացումն ակնհայտ են և անհերքելի թե՛ նախկինում որպես փոխդեկան, թե՛ ներկայիս ժամանակահատվածում որպես դեկանի պաշտոնակատար:

Ելույթ ունեցողներն անդրադարձան Յաղուբյանի՝ որպես ստորաբաժանման ղեկավարի պ/կ կողմից իրականացվող արդյունավետ կառավարմանը, ինչը մեծապես խթանում է աշխատակիցների աշխատանքային վարքագծի արդյունավետության բարձրացումն ու

բոլոր ամբիոնների գիտամանկավարժական գործունեության համալիր բարելավումը: Մ.Յաղուբյանը, ղեկավարելով ֆակուլտետի գիտակրթական գործընթացի արդյունավետ կազմակերպումը, նպաստում է ակադեմիական միջավայրում երկխոսության բարելավմանը: Գիտական խորհրդի անդամներն ընդգծեցին, որ արդյունավետ կառավարման ու համակարգային մոտեցումների շնորհիվ Մ.Յաղուբյանը կարող է ապահովել ֆակուլտետի արդյունավետ գործունեության շարունակականությունը, նպաստել հետազոտահենք կրթության որակի բարելավմանն ու շարունակել խթանել միջազգային համատեքստում գիտական ոլորտի առաջընթացը:

Եվրոպական լեզուների և հաղորդակցության

ֆակուլտետի դեկանի պ/կ և գիտական խորհրդի
նախագահ, բ.գ.թ., դոցենտ՝ Մ.Հ.Յաղուբյան

Գիտական խորհրդի քարտուղար,
բ.գ.թ., դոցենտ՝ Մ. Գ. Դալալյան

25.05.2026 թ.